ՍԱՐՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ

Մարտիրոս Սարյանը ստեղծագործական ավելի քան յոթանասուն տարիների կյանք ունեցավ։ Նա ապրեց իրարամերժ ու փոթորկոտ պատմական ժամանակահատվածներ, բայց միշտ հավատարիմ մնաց իր արվեստի ճշմարտությանը, մնաց մաքուր ու աներեր։ Նրա ստեղծագործությունը հայ կերպարվեստի նվաճած ամենաբարձր գագաթներից է։

Մեր վարպետին երբ հարցնում էին, թե ո՞ր դպրոցին է պատկանում, պատասխանում էր. «Ոչ մի դպրոցի, ես մարդ եմ»։ Դպրոցը Սարյանի համար մարդն էր, նրա մեջ ապրող բնությունը։ Եվ նա հաստատեց, որ արվեստի գործի արժեքը բնորոշվում է նրա մեջ եղած մարդկային բովանդակության չափով։ Այս ըմբռնողությունը հատուկ է ամեն մի իսկական արվեստագետի, անկախ նրա այս կամ այն դպրոցին պատկանելուց։

Սարյանի արվեստի արդիականությունը վառ արտահայտություն է գտել նրա գեղարվեստական մտածողության, գունային ինքնատիպ լեզվի մեջ։

Սարյանը ստեղծագործական կյանք մտավ XX դարի սկզբին և նրա գեղանկարչության բնորոշ կողմերը՝ գույնի մաքրությունն ու հնչեղությունը, գծի խիստ ընդհանրացվածությունը, հարմոնիայի և պատկերի կառուցման սկզբունքները բխում են ժամանակակից արվեստի օրենքներից։ Ռուսական արվեստի միջավայրում, ուր նա ձեռք էր բերել պրոֆեսիոնալ գիտելիքներ, Սարյանի աշխարհը անսպասելի հայտնություն եղավ, իսկ արևմտաեվրոպականի համեմատությամբ՝ համահնչյուն էր ֆրանսիականին։ Սակայն, ի տարբերություն գույնի մատիսյան դրսևորման, Սարյանի մոտ հարթ քսված մաքուր գույնը անկախ չէր կյանքից, իրականությունից։ Այս ամենով հայ նկարչի մտածելակերպը մոտ էր Սեզանին, որի նպատակն էր իմպրեսիոնիստական գույնին վերադարձնել աշխարհի առարկայականությունը, նյութականությունը։ Սարյանի մոտ մաքուր գույների հակադիր ներդաշնակումները նպատակ ունեն շեշտելու լույսը, կյանքը, շարժումը։ «Գույնը պետք է արտահայտի մեր մեջ ապրող կյանքի բովանդակությունը»,— գրել է վարպետը։ Կյանքը Սարյանի համար լույսն է, արևը։

Կերպարային մտածողության արդիական ոճ ստեղծելու համար Սարյանը Արևմուտքին դիմելու անհրաժեշտություն չունեցավ։ Նա զարմանալի բնազդով տեսավ համաշխարհային գեղանկարչության զարգացման տենդենցները։ Մայր երկրին ու մայր մշակույթին օրգանապես ձուլված Սարյանը դուրս ելավ իր հողից և ժամանակակից արվեստի մակարդակին բարձրացրեց սեփականը։

Մյուս կողմից, Սարյանը եզակի երևույթ է ամբողջ Արևելքի նորագույն նկարչության մեջ։ Հրաշակերտ միջնադար ապրած Արևելքի (Ճապոնիա, Չինաստան, Հնդկաստան, Պարսկաստան) XIX և XX դարերի նկարչության մեջ մենք չենք տեսնում այնպիսի անհատականություն, որ կատարած լինի ազգային արվեստի արդիականացման այն դերը, ինչ Սարյանը կատարեց հայկական նորագույն շրջանի նկարչության մեջ, դառնալով մեր ազգային նկարչության «XX դարը» ստեղծողը։

Իբրև հայ նկարչի, Սարյանին ամենից մոտն ու հարազատը իր հայրենիքն էր, հայրենի բնությունն ու ժողովուրդը։ Մայր երկրի ու ժողովրդի հանդեպ արվեստագետի սերը սահման չուներ։ Այդ սիրո ուժը պատկերացնելու համար պետք է յոթ տասնամյակ ետ գնալ ու տեսնել ժողովրդի ծնած հանճարեղ մի



պատանու, որի համար չնչար առավել սուրբ ըղձանք, քան հայրենիքի ու նրա դարավոր մշակույթի փրկությունն ու հարատևումը։ Մեր դարի սկզբին, դարերի երազանքով շաղախված այդ սիրով համակված էին ժողովրդի բոլոր առաջադեմ արվեստագետները։

XIX և XX դարերի սահմանագլխին ազգային կոնսոլիդացիա ապրող, անցյալի մշակույթի սնփական հարուստ ավանդներ ունեցող հայ ժողովրդի համար մշակութային վերելքը պատմականորեն անխուսափելի և օրինաչափ երևույթ էր։ Այդ վերելքի ռահվիրաների համաստեղության մեջ, Կոմիտասի, Թորամանյանի, Թամանյանի ու մյուս խոշոր արվեստագետների կողքին Սարյանը վերածնեց գեղանկարչության ազգային մտածելակերպը։

Նախորդ սերնդի հայ նկարիչները հայրենի բնությունն ու հայկական թեմատիկան պատկերում էին գեղանկարչական այն դպրոցի արտահայտչամի-

ջոցներով, որտեղ ուսանել էին։ Նրանցից առավել տաղանդավորները (Վ. Սուրենյանց, Ե. Թադևոսյան) արդեն իսկ զգում էին գեղանկարչական ազգային լեզու ստեղծելու անհրաժեշտությունը։ Այդ բանը վիճակվեց կատարելու Մարտիրոս Սարյանին։

Մշակույթի այս վերելքը իր օրինաչափ կարգացումը գտավ հայ ժողովրդի տնտեսական-սոցիալական կյանքի վերածննդի՝ պետականության ստեղծման, սոցիալիստական իրավակարգի պայմաններում։

«Բնության ամենահրաշալի ստեղծագործությունը մարդն է։ Բնությունը ծնում է մարդուն, որպեսզի նրա միջոցով տեսնի, հմայվի իր հրաշք գեղեցկությամբ»,— ասել է Սարյանը։ Նրա ողջ ստեղծագործությունը տոգորված է բնապաշտությամբ։ Նրա մանկությունն անցավ բնության գրկում, նա հասակ առավ նահապետական հայ ընտանիքում։ Այնուհետև՝ ուսում Մոսկվայում, իր բնորոշմամբ՝ հիանալի ուսուցիչների ղեկավարությամբ։ 1901 թ., բանմեկ տարեկան հասակում, Սարյանը առաջին անգամ հանդիպեց հայրենի բնության ու մշակույթի հետ։ «Այստեղ իրական տեսա այն բոլորը, ինչ երազում էի մանկությունից սկսած»։

1904—1908 թթ. նա «երազներ ու հեքիաթներ» նկարեց։ Թվում է թե երիտասարդ նկարիչը այլ կերպ չէր կարող սկսել։ Սարյանի «երազները» բնության գեղեցկությամբ սքանչացող նկարչի գույնի ու լույսի ապրումներ էին։ Բնությունն այնքան անընդգրկելի, խորհրդավոր ու գեղեցիկ է, որ նկարիչն այն ընկալում է մանուկի պես՝ իբրև զարմանահրաշ հեքիաթ, իբրև գույնի, լույսի, երազի խրախճանք։

1909—1915 թթ., ինքնաբերաբար, երևակայված սյուժեները փոխարինվեցին ռեալ իրականության պարզ, ընդհանրացված ձևերով։ Պատկերները կառուցվեցին կտավի հարթության վրա, հնչեղ գույների հավասարաչափ տեղաբաշխման սկզբունքով։ Այստեղ արտացոլում գտան մեր միջնադարյան նկարչության ավանդները։ Մաքուր գույնը և նրանից ծնվող լույսը Սարյանի կտավներում ստացավ բացարձակ արժեք ու շարունակեց մնալ առողջ ու կենսաթարթիռ զգացմունքներ պատգամող սիմվոլ։

1920—1926 թթ. լույսի գաղափարը նկարչի գործերում ճառագեց նոր ուժով։ Ազատագրված հայրենիքը դարձավ անփոփոխ ու անփոխարինելի թեմա։ Սարյանի երգած լույսը «իջավ» ու ձուլվեց այն հողին, որից ծնվել էր։ Նկարիչը ստեղծեց լեռնային երկրի ընդհանրացված կերպարը, գունային վառ ակորդով նրան էպիկական հնչեղություն հաղորդելով։

1926 թ. աշնանը Սարյանը մեկուկես տարով մեկնեց Փարիզ։ Նպատակը բուժվելն էր։ Ամիսների բաժանումը հայրենիքից տարիների կարոտ դարձավ։ Եվ արվեստների մայրաքաղաքում Սարյանը դարձյալ նկարեց մայր բնության թեմաներով, շարունակելով «երգել» իր երկրի գեղեցկությունը։

1928 թ. մինչև իր կյանքի վերջը գույնի մեծ բանաստեղծը կերտեց Հայաստան երկիրն ու նրա դավակներին գովերգող մի վիթխարի պատկերասրահ, միաժամանակ կատարեց թատերական հիանալի ձևավորումներ, գրքերի ու ժողովրդական հեքիաթների սքանչելի պատկերազարդումներ։

Հայրենիքի հանդեպ ունեցած պաշտամունքը ու մայր ժողովրդից ժառանգած կենսասիրությունը պայմանավորեցին սարյանական արվեստի լավատեսական բովանդակությունը։ Մայր հողը ծնեց Սարյանին, որպեսզի նրա միջոցով հմայվի իր հրաշք գեղեցկությամբ։

Մարտիրոս Սարյանը անձնական նեղ ապրումների ու տրամադրությունների նկարիչ չէր։ Յոթ տասնամյակների ստեղծագործական կյանքում նա տեսավ շատ բան, ապրեց և՛ ուրախ, և՛ շատ ծանր օրեր, սակայն չշեղվեց արվեստի սարյանական ճանապարհից, մնաց համաժողովրդական նվիրումի ու հավատի նկարիչ։

Անձնական ապրումներից վեր լինելն ու հայրենիքին նվիրվածությունն են Սարյանի մեջ ծնել նաև մեծ քաղաքացուն։

Դեռ 1916 թ., Թիֆլիսում, Սուրենյանցի, Թադևոսյանի, Թերլեմեզյանի. Սարյանի ջանքերով ստեղծվեց հայ նկարիչների անդրանիկ միությունը։ Նույն թվականին Սարյանը հանդես եկավ իբրև Վ. Բրյուսովի կազմած «Հայկական պոեզիայի անթոլոգիայի» ստեղծման ակտիվ մասնակից։

1921 թ. Սարյանը վերջնականապես հաստատվեց Սովետական Հայաստանում և իր մեծ սերնդակիցների՝ Թ. Թորամանյանի, Ալ. Թամանյանի, Ալ. Սպենդիարյանի, Ե. Չարենցի, Հ. Կոջոյանի, Ա. Բակունցի, Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Գ. Ղափանցյանի, Վ. Փափազյանի, Ա. Ոսկանյանի, Հ. Ներսիսյանի հետ միասին սկսեց կերտել իր նորոգ երկրի նոր մշակութային կյանքը։ Տեղարվեստի ուսումնարան, հնությունների պահպանության պետական կոմիտե, ազգագրական-պատմական թանգարան, կերպարվեստի պետական թանգարան, սովետահայ նկարիչների միություն, նոր գրքարվեստ, արվեստի պատմության ու տեսության առաջին բաժանմունք. ահա այն բնագավառները, որոնցում Սարյան-քաղաքացին հանդես է եկել իբրև հիմնադիր անդամ և նըպաստել հանրապետության կուլտուր-պատմական կյանքի առաջընթացին։

Սարյանի համար մի բան կար իր արվեստից բարձր։ Դա հայրենիքն էր։ Նկարիչը ամբողջական էր հայրենիքով։ «Հողը կենդանի էակ է. նա ունի իր հոգին, և առանց հայրենիքի, առանց հարազատ հողի հետ սերտ կապի մարդ չի կարող գտնել իրեն, իր հոգին»։ Սարյանը իրեն զգում էր հայրենիքի հետ սերտ միասնության մեջ։ Նրանից անջատ նկարիչը իրեն չէր պատկերացնում։

Սարյանի արվեստը կյանքի հրաշք գեղեցկության, ապրելու երջանկության ցնծերգ է։ Ստեղծագործելը նրա համար եղել է ինքնամոռացում։ Նկարիչը խորացել է բնության մեջ, նույնացել նրան, հայտնագործել իր ճշմարտությունը... Լույս, գեղեցկություն, հավիտենություն պատգամող այդ ճշմարտությունը մաքուր է, բյուրեղացած։ Այստեղից է բխում նրա արվեստի համամարդկային ոգին։ Սրանով է բնորոշվում նրա արվեստի բացարձակ արժեքը, բոլոր ժամանակներին հարազատ լինելու առհավատչյան։

Այլևս մեզ հետ չէ սիրելի վարպետը։ Բայց յուրաքանչյուր սերունդ իր համար նորից «կբացի» նրան և հոգևոր սնունդ կառնի իմաստությամբ ու գեղեցկությամբ առլեցուն նրա ժառանգությունից։

Իսկական մեծերը մահից հետո ավելի են մեծանում։ Նրանք հարազատ են դառնում բոլոր ժամանակներին։

Շ. ԽԱՉԱՏՐՅԱՆ